

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԵՂԻՆԱԿԱՑԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ,
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔ

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՎԹՅԱՆ

Ներածություն: Ժամանակակից թվային աշխարհում *արհեստական ինտելեկտի*¹ (այսուհետ նաև՝ ԱԻ) անսահման ներուժի (ինքնագնաց տրանսպորտային միջոցներից, անօդաչու թռչող սարքերից մինչև վիրտուալ բուժաշխատողների, ավտոմատացված անձնական օգնականների և ԱԻ այլ համակարգերի) բացահայտումը և զարգացումը վկայում է, որ հիմնովին փոխվել և դեռ փոխվելու են մարդկանց ապրելու, աշխատելու և միմյանց հետ փոխհարաբերվելու գոյություն ունեցող ձևերը: Թեև մասնագիտական գրականության մեջ տարբերում են *թույլ (նեղ) և ուժեղ (ընդհանուր) արհեստական ինտելեկտ* հասկացությունները, և ընդունվում է, որ ներկայումս մարդկությանը հասանելի է միայն *թույլ (նեղ) արհեստական ինտելեկտը*², այնուամենայնիվ փաստ է, որ առավել զարգացած ԱԻ համակարգերն այսօր կարող են *ստանալ կամ ձեռք բերել արդյունքներ*³, որոնք եթե ստեղծված լինեին մարդու կողմից, կհամարվեին, օրինակ, պոեմներ, գեղանկարներ, երաժշտական կամ գրականության, գիտության և արվեստի բնագավառի այլ յուրօրինակ ստեղծագործություններ, նույնիսկ գյուտեր և ենթակա կլինեին իրավական պաշտպանության: Այսպես, որոշ ԱԻ համակարգեր *բնական լեզվի* զարգացման շնորհիվ կարող են չմշակված տվյալներն ուղղակիորեն վերափոխել ընթեռնելի տեքստերի⁴ (օրինակ՝

¹ Սույն հոդվածում արհեստական ինտելեկտն ընկալվում է որպես համակարգչային համակարգերի ամբողջություն, որն ունակ է հաղթահարելու սովորաբար բնական ինտելեկտի կողմից կատարվող առաջադրանքներ:

² Տե՛ս, օրինակ, **Kiseleva, A.**, *What is Artificial Intelligence and Why Does It Matter for Copyright*. (January 2019). 4iP Council, էջ 8-9:

³ Օգտագործվում են տարբեր եզրույթներ՝ «ինքնանավար ԱԻ ստեղծած, հեղինակած, գեներացրած» «աշխատանք, ստեղծագործություն»: Մենք օգտագործում ենք «ԱԻ ձեռքբերած կամ ստացած արդյունքներ»:

⁴ Տե՛ս, օրինակ, **Cade Metz**, *Finally, a Machine That Can Finish Your Sentence*, N.Y. TIMES (Nov.18, 2018), [<https://www.nytimes.com/2018/11/18/technology/artificial-intelligencelanguage.>]: Ավելի վաղ օրինակներ տե՛ս [https://repository.uchastings.edu/hastings_comm_ent_journal/vol4/iss4/11] **Timothy L. Butler**, *Can a Computer be an Author - Copyright Aspects of Artificial Intelligence*, 4 Hastings Comm. & Ent. L.J.707(1982), էջ 715; **Denicola, Robert**, *Ex Machina: Copyright Protection for Computer-Generated Works* (2016). 69 Rutgers University Law Review

բիզնեսի և ֆոնդային բորսայի զեկույցներ, եղանակի կանխատեսումներ), պատրաստել տեղական նորությունների մասին հոդվածներ⁵: Դրանք կարող են նույնիսկ սթենդ-ափ ոճի կատակերգություններ գրել⁶ և *գեներացնել* համակարգչային ծրագրի կողի մասեր⁷: Հանրային մեծ ուշադրություն գրավեցին «Հաջորդ Ռեմբրանտը» արվեստի նոր գործը⁸, Ճապոնիայի գրականության ազգային մրցանակի երկրորդ փուլ անցած ԱԻ *գրած* կարճ վեպը⁹, Շուբերտի 8-րդ և Բեթհովենի 10-րդ անավարտ սիմֆոնիաներն ԱԻ կողմից ավարտելը¹⁰: Վերջապես, 2019 թ. Սյուրեի համալսարանի պրոֆեսոր Ռայան Աբոտի գլխավորած թիմն առաջին անգամ աշխարհում արտոնագրային հայտ ներկայացրեց «*ԴԱԲՈՒՍ*» ԱԻ ստացած երկու գյուտերի համար, որոնք Եվրոպական արտոնագրային գործակալությունը և Միացյալ Թագավորության Մտավոր սեփականության գործակալությունը ճանաչեցին գյուտին ներկայացվող արտոնագրատնակության պայմանները լիովին բավարարող¹¹:

ԱԻ համակարգերը և դրանց կապակցությամբ առաջացող հարաբերությունները սերտորեն առնչվում են մտավոր սեփականության իրավունքներին, հետևաբար՝ մարտահրավերներ են ստեղծում նախևառաջ մտավոր սեփականության ինստիտուտների համար և պահանջում ոլորտի օրենսդրական քաղաքականության արագ արձագանքը: Դա պայմանավորված է նաև այն բանով, որ մտավոր սեփականության քաղաքականության հիմնական նպատակներից մեկը տնտեսության և մշակութային ոլորտներում նորարարության և ստեղծագործականության խթանումն է¹²: Այս տեսանկյունից ողջունելի է Մտավոր սեփակա-

251(2016), [<https://ssrn.com/abstract=3007842>], հղումները վերցված են՝ **Tim W. Dornis**, *Artificial Creativity: Emergent Works and the Void in Current Copyright Doctrine*, 22 Yale J. L. & Tech.1 (2020), էջ 5:

⁵ Տե՛ս, օրինակ, **Andres Guadamuz**, *Artificial intelligence and copyright*. WIPO Magazine, October 2017, [https://www.wipo.int/wipo_magazine/en/2017/05/article_0003.html]

⁶ Տե՛ս **Robert Hart**, *If an AI Creates a Work of Art, Who Owns the Rights to It?* (Quartz, 15 August 2017). [<https://qz.com/1054039/google-deepdream-art-if-an-ai-creates-a-work-of-art-who-owns-the-rights-to-it/>]

⁷ Տե՛ս **Jade Boyd-Rice**, ‘*New A.I. Application Can Write Its Own Code*’ 25 (Futurity, 25 April 2018), [<https://www.futurity.org/artificial-intelligence-bayou-coding-1740702/>]

⁸ Դա 30-ամյա կովկասյան արտաքինով տղամարդու եռաչափ դիմանկար է, որը ստացել է ԱԻ-ն՝ վերլուծելով 17-րդ դարի հոլանդացի նկարիչ Ռեմբրանտի 346 գործերը, տե՛ս [<https://www.theguardian.com/artanddesign/2016/apr/05/new-rembrandt-to-be-unveiled-in-amsterdam>]

⁹ Տե՛ս **Andres Guadamuz**, նշվ. աշխ.:

¹⁰ Տե՛ս, օրինակ, **Justin Huggler**, *Computer Is Set to Complete Beethoven’s Unfinished Symphony*, Telegraph (Dec. 13, 2019), [<https://perma.cc/33DT-KEM7>]; **John Kennedy**, *How AI Completed Schubert’s Unfinished Symphony No 8*, Silicon Republic (Feb. 22, 2019), [<https://perma.cc/F7N6-2RVB>]

¹¹ Տե՛ս **Ryan Abbott**, *The Artificial Inventor Project*, WIPO Magazine, December 2019, [https://www.wipo.int/wipo_magazine/en/2019/06/article_0002.html]: Որպես գյուտարար հայտում նշված էր «ԴԱԲՈՒՍ» ԱԻ-ն: Հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ գյուտարար կարող է լինել միայն ֆիզիկական անձը:

¹² Տե՛ս *WIPO Conversation on Intellectual Property (IP) and Artificial Intelligence (AI)*. Second Session. Draft issues paper on intellectual property policy and artificial intelligence, prepared by the WIPO Secretariat, WIPO/IP/AI/2/GE/20/1; Date: December 13, 2019, կետ 1:

նության համաշխարհային կազմակերպության ակտիվությունը ԱԻ համակարգերի և մտավոր սեփականության փոխազդեցության մի շարք ասպեկտների վերաբերյալ լայն քննարկումներ կազմակերպելու հարցում: Փաստ է, որ ԱԻ-ն դարձել է ընդհանուր նպատակ ունեցող տեխնոլոգիա, որի կիրառություններն արդեն իսկ մեծ ազդեցություն ունեն մշակութային բարիքների և տնտեսական ապրանքների ու ծառայությունների ստեղծման, արտադրության և բաշխման գործում¹³: Մակայն չպետք է անտեսել այն իրավական, էթիկական, քաղաքական, սոցիալական, անվտանգության և այլ խնդիրները, որոնք առաջանում են ԱԻ համակարգերը կյանքի կոչելու հետևանքով: Այդ խնդիրները պետք է լուծումներ գտնեն միջառարկայական և միջճյուղային հիմնարար հետազոտությունների շրջանակներում, արժանաձև համապատասխան ոլորտների քաղաքականությունների արագ արձագանքին և ըստ անհրաժեշտության հանգեցնեն կարգավորումների վերանայման ու նոր իրողություններին հարմարեցման:

Սույն հոդվածում համապարփակ կերպով քննարկվում են արհեստական ինտելեկտի և հեղինակային իրավունքի ինստիտուտի փոխազդեցության հիմնական ասպեկտները, վերլուծվում են այդ կապակցությամբ մասնագիտական հարուստ գրականության մեջ տեղ գտած առաջնակարգ դիրքորոշումները: Մենք կներկայացնենք ԱԻ զարգացման պատճառով հեղինակային իրավունքի առջև ծառայած հետևյալ էական հարցադրումները. *արդյո՞ք ներկա սերնդի արհեստական ինտելեկտն այլևս վերացնում է ստեղծագործականության՝ մինչ այժմ տիպիկ մարդկային ունակություն համարվելու մենաշնորհը, և կարելի՞ է ասել, թե այն կարող է ինքնուրույն «ստեղծել» գիտության, գրականության և արվեստի բնագավառի յուրօրինակ ստեղծագործություններ: Եթե ո՛չ, ապա արդյո՞ք արհեստական ինտելեկտի ձեռք բերած կամ ստացած արդյունքները, որոնք համադրելի, համարժեք կամ երբեմն նույնիսկ գերազանցելի են մարդու ստեղծած յուրօրինակ ստեղծագործություններին, այնուամենայնիվ պետք է որևէ իրավական պաշտպանություն ստանան հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների ինստիտուտների ներքո: Եթե այո՞, ապա ի՞նչ հիմնավորմամբ, ո՞վ(քեր) և ի՞նչ ժամկետներով պետք է ունենա(ն) արհեստական ինտելեկտի ձեռք բերած (ստացած) արդյունքների նկատմամբ իրավունքներ և ի՞նչ իրավունքներ:*

Հարկ է հստակեցնել, որ սույն հոդվածում չեն քննարկվում ԱԻ արդյունքների ստացմամբ հեղինակային իրավունքի հնարավոր խախտումների (օրինակ՝ ԱԻ մեքենայական ուսուցման ժամանակ հեղինակային իրավունքի օբյեկտ համարվող աշխատանքների տվյալների օգտագործմամբ պայմանավորված) և ստեղծագործության ազատ օգտա-

¹³ Տե՛ս *WIPO Conversation on Intellectual Property (IP) and Artificial Intelligence (AI)*, նշվ. աշխ., կետ 1, [https://www.wipo.int/edocs/mdocs/mdocs/en/wipo_ip_ai_ge_20/wipo_ip_ai_2_ge_20_1.pdf]

գործման դեպքերի հնարավոր ընդլայնման հարցերը, ԱԻ համակարգի ստեղծման համար օգտագործվող համակարգչային ծրագրերի նկատմամբ հեղինակային իրավունքի հարցերը, ինչպես նաև՝ այն իրավիճակները, երբ ԱԻ-ն օգտագործվում է որպես գործիք, ուստի արդյունքը ստացվում է մարդու ուղղակի ուղղորդմամբ կամ ստեղծագործական ներդրման շնորհիվ: **Փոխարենը սույն հոդվածում քննարկվում են ինքնավար¹⁴ արհեստական ինտելեկտի համակարգերի ձեռք բերած արդյունքներին** հեղինակային կամ հարակից իրավունքների ինստիտուտների ներքո իրավական պաշտպանություն տրամադրելու նպատակահարմարության, հնարավորության և թույլատրելիության հարցերը:

I բաժնում ներկայացվում է, թե ինչ է ԱԻ-ն, և բնութագրվում են դրա որոշ տեխնիկական ասպեկտները, քննարկվում են ԱԻ ինքնավարության հարցերը, ԱԻ ձեռք բերած արդյունքների կապակցությամբ օգտագործվող եզրույթները և *արհեստական ստեղծագործականության* գոյության հնարավորությունը: **II բաժնում** քննարկվում են հեղինակային իրավունքի ինստիտուտի հիմնարար հայեցակարգերը՝ *յուրօրինակություն* և *հեղինակություն/իրավատիրություն*, դրանց վերաբերյալ ընդհանուր և մայրցամաքային իրավական համակարգերում ձևավորված հակադիր մոտեցումները, որոշ ներդաշնակեցված չափանիշները, և քննարկվում է ԱԻ արդյունքների կապակցությամբ դրանց կիրառելիության, հետևաբար՝ հեղինակային իրավունքի ինստիտուտի ներքո պաշտպանություն տրամադրելու հնարավորությունը: **III բաժնում**, հոդվածի սահմանափակ ծավալներից ելնելով, հակիրճ ներկայացվում է ԱԻ ձեռք բերած արդյունքներին իրավական պաշտպանություն տրամադրելու անհրաժեշտությունը, ամփոփվում են այդ կապակցությամբ տարբեր երկրների գիտական համայնքների դիրքորոշումներն ու առաջարկությունները: Եզրակացություն է արվում, որ նման արդյունքներին պաշտպանություն տրամադրելը հնարավոր և նպատակահարմար է ոչ թե հեղինակային իրավունքի, այլ հարակից իրավունքների ինստիտուտի շրջանակում: Սակայն որոշ էական հարցերի շուրջ միջազգային հանրության շրջանում արդարացիորեն բացակայում է ընդհանուր համաձայնությունը, ուստի դրանք պահանջում են հետագա ուսումնասիրություն, որի արդյունքներից ելնելով էլ հնարավոր կլինի հարակից իրավունքների ինստիտուտը դիտարկել որպես արդյունավետ մեխանիզմ և կյանքի կոչել կամ այլ եզրահանգման գալ:

Արհեստական ինտելեկտը և ստեղծագործական գործընթացը: Տասնամյակներ շարունակ¹⁵ մասնագիտական գրականության մեջ

¹⁴ Մենք օգտագործում ենք առավելագույն ինքնավարություն ունեցող արհեստական ինտելեկտ, որտեղ արդյունքի առաջացման գործում մարդկային միջամտությունը նվազագույն է և չի հասնում ստեղծագործական մակարդակի:

¹⁵ Որպես գիտական հետազոտության բնագավառ ԱԻ-ն սկիզբ է առել 1956 թ. Դարսոնուտի կոնֆերանսի ժամանակ, որի նախաձեռնողները ևս չեն տվել ԱԻ սահմանումը, տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 3:

տրվել են ԱԻ ազատ բնորոշումներ՝ հիմքում ունենալով այն գաղափարը, որ համակարգչային ծրագիրը կարող է իրականացնել այնպիսի գործառույթներ, որոնք սովորաբար կարող են կատարվել մարդկային բանականության շնորհիվ¹⁶, մասնավորապես՝ պատկերի ճանաչում, լեզվի ընկալում, որոշումների կայացում և լեզուների թարգմանություն¹⁷: *Արհեստական ինտելեկտ* և *ռոբոտ* հասկացությունների ճկուն, համընդհանուր ընդունելի և ինովացիայի զարգացումը չխոչընդոտող սահմանման անհրաժեշտության մասին նշվում է Եվրոպական պառլամենտի՝ «Ռոբոտաշինության կապակցությամբ քաղաքացիական իրավունքի կանոնների վերաբերյալ» առաջարկություններում¹⁸: Դա բարդ գործ է, քանի որ արհեստական ինտելեկտը ոչ միայն ունի տեխնիկական և տեխնոլոգիական, այլև իրավական, սոցիալական, էթիկական, անվտանգային և մի շարք այլ ասպեկտներ: Սակայն այդ հանգամանքը չպետք է խոչընդոտի, որ ԱԻ որոշ տեխնիկական ասպեկտներ ուսումնասիրվեն, և դրա ազդեցության հետևանքով հեղինակային իրավունքի ինստիտուտի առաջ ծառայած մարտահրավերները քննարկվեն:

Արհեստական ինտելեկտը հավաքական եզրույթ է, որն ունի մի շարք ենթադասեր՝ մեքենայական ուսուցում (machine learning), բնական լեզվի մշակում (natural language processing), ռոբոտաշինություն (robotics), համակարգչային տեսլական (computer vision), նյարդային ցանցեր (neural networks), խոր ուսուցում (deep learning) և այլն¹⁹: Սույն հոդվածի տեսանկյունից կարևոր է քննարկել մեքենայական ուսուցումը և դրա ենթահամակարգ համարվող խոր ուսուցումն ու նյարդային ցանցերի մեթոդը²⁰, քանի որ շնորհիվ դրանց ներկայիս սերնդի ԱԻ հնարավորություններն էապես գերազանցում են նախորդ երկու

¹⁶ Տե՛ս, օրինակ, Artificial Intelligence, Oxford Dictionary, [https://www.oxfordreference.com/search?q=artificial+intelligence&searchBtn=Search&isQuickSearch=true], մեկ այլ բնորոշմամբ՝ արհեստական ինտելեկտը պզորիթմները և համակարգչային կամ ռոբոտ սարքավորումներն են, որոնք ունակ են իրականացնելու առաջադրանքներ, որոնց կատարումը պահանջում է մարդկային կամ բնական ինտելեկտ, տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 1; ԱԻ նաև սահմանվում է որպես «հետազոտություն մեր միջավայրում գոյություն ունեցող ընկալող և գործող գործակալների վերաբերյալ», **S. J. Russell and P. Norvig**, *Artificial Intelligence: A Modern Approach* (Pearson, 3rd edn, 2010), էջ 1:

¹⁷ Տե՛ս, օրինակ, [https://perma.cc/B6L2-JDQ4]

¹⁸ Տե՛ս *Recommendations on Civil Law Rules in Robotics*, Recital C: [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2016/571379/IPOL_STU(2016)571379_EN.pdf]

¹⁹ Տե՛ս, օրինակ, **Hristov Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Survey* (April 1, 2020). JSPG, Vol. 16, Issue 1 April 2020, [https://ssrn.com/abstract=3490458]: Տեղին է նշել, որ ռոբոտ և արհեստական ինտելեկտ հասկացությունները հոմանիշներ չեն: ԱԻ ծրագիրն է, որում դրսևորվում է ինտելեկտը, իսկ ռոբոտը ֆիզիկական տարրն է, որն իրականացնում է ԱԻ կայացրած որոշումները: Սակայն ոչ բոլոր ռոբոտներն են «խելացի», և ոչ բոլոր դեպքերում է, որ արհեստական ինտելեկտը կարիք ունի ռոբոտի տեսքով արտաքին ձևի իր գործառույթներն իրականացնելու համար, տե՛ս **Kiseleva A.**, նշվ. աշխ., էջ 7, հղում 2:

²⁰ Տե՛ս, օրինակ, [https://towardsdatascience.com/what-is-deep-learning-and-how-does-it-work-f7d02aa9d477], [https://www.freecodecamp.org/news/want-to-know-how-deep-learning-works-heres-a-quick-guide-for-everyone-1aedeca88076/], [https://www.hy.w3ki.com/data_mining/artificial_neural_network.html]

տեխնոլոգիական հեղափոխությունների ձեռքբերումները, որոնց խնդիրը ստեղծագործական աշխատանքների *արագացված կրկնօրինակումն* էր կամ դրանց *համատարած տարածումը* համացանցի միջոցով: Այժմ, ինչպես դիպուկ նկատում է պրոֆեսոր Թիմ Դորնիսը, մարդկային ստեղծագործականությունը *արհեստական ստեղծագործականությունամբ փոխարինելու* դարաշրջանի շեմին ենք²¹:

Մեքենայական ուսուցումը բնորոշվում է որպես «սովորելու ունակություն՝ առանց հստակ ծրագրավորված լինելու»²². մեքենան ապահովվում է տվյալներով և սկսում ինքնուրույն *սովորել*²³: **Խոր ուսուցումը** համարվում է ԱԻ բոլոր ենթաճյուղերից ամենախոստումնալիցը, որ մի օր կստեղծի *ընդհանուր (ուժեղ) արհեստական ինտելեկտ*²⁴: **Արհեստական նյարդային ցանցերը** խոր ուսուցման մեջ օգտագործվող ալգորիթմներն են: Խոր ուսուցումը կառուցված է գործելու ինչպես մարդու ուղեղը. օգտագործելով նյարդային ցանցերի ալգորիթմները՝ այն տեղեկատվությունը վերամշակում է մարդու պես²⁵: Երբ նյարդային ցանցերի շնորհիվ խոր ուսուցման համակարգի *սովորող* ալգորիթմները գործում են, մարդը չի վերահսկում, թե ինչպես են դրանք համատեղում և համեմատում տվյալները²⁶: Այս համակարգի աշխատանքը թափանցիկ չէ և բնութագրվում է որպես *սև արկղի միջոցով տվյալներն արդյունքի վերածելը*: Քանի որ ԱԻ-ն անընդհատ ինքնուրույն սովորում է, հնարավոր արդյունքը դժվար է կանխատեսել և բացատրել: Մա արագ, ինքնավար և ոչ ինտուիտիվ ինքնաուսուցման մեխանիզմ է²⁷: Այսինքն՝

²¹ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 5:

²² **Gautam Narula**, *Everyday Examples of Artificial Intelligence and Machine Learning* (TechEmergence, 22 July 2018), [<https://www.techemergence.com/everyday-examples-of-ai/>]:

²³ Տե՛ս նույն տեղը, նաև **Mike Colagrossi**, *What's the Difference Between A.I., Machine Learning, and Robotics?* (BigThink, 28 May 2018), [<https://bigthink.com/mike-colagrossi/whats-the-difference-between-ai-machine-learning-and-robotics/>]

²⁴ Տե՛ս **Kiseleva A.**, նշվ. աշխ., էջ 8-9: Ընդունվում է, որ զարգացման հաջորդ փուլում մարդկայինին նման կամ **ընդհանուր (ուժեղ) արհեստական ինտելեկտն** է ստեղծվելու, որը կարող է հասկանալ և պատճառաբանել իր ամբողջ միջավայրը, ինչպես մարդը կաներ, տե՛ս **Ben Dickson**, *What is Narrow, General and Super Artificial Intelligence* (Tech Talks, 12 May 2017), [<https://bdtechtalks.com/2017/05/12/what-is-narrow-general-and-super-artificial-intelligence/>]: «Մարդկային ընդհանուր ինտելեկտը թույլ է տալիս մարդուն արձագանքել ստեղծված իրավիճակին, վերաբերվել իրադարձություններին տրամաբանական և հուզական մոտեցմամբ, մինչդեռ մեքենան չի կարող նույնն անել գոնե առաօհեա մի քանի տասնամիլիոն» (NeuroGadget, *Difference Between General AI and Narrow AI* (Neurogadget, 2018), [<https://neurogadget.net/2018/03/08/difference-general-ai-narrow-ai/56652/>]): Նշվում է նաև **գերինտելեկտի** մասին. «Ցանկացած ինտելեկտ, որը մեծապես գերազանցում է մարդկանց ճանաչողական գործառնությունը գրեթե բոլոր ոլորտներում», ինչը էլ ավելի հեռավոր ապագայում, եթե երբևէ հնարավոր է, ձեռք բերվի, տե՛ս **Nick Bostrom**, *Superintelligence: Paths, Dangers, Strategies* (Oxford University Press 2014), 21):

²⁵ Տե՛ս **Dell Technologies**, *The Difference Between AI, Machine Learning and Robots* [<https://www.delltechnologies.com/en-us/perspectives/the-difference-between-ai-machine-learning-and-robotics/>]

²⁶ Տե՛ս **Cary Coglianese** and **David Lehr**, *Regulating by Robot: Administrative Decision Making in the Machine-Learning Era* (2017). Faculty Scholarship at PL.1734, [https://scholarship.law.upenn.edu/faculty_scholarship/1734/]

²⁷ Տե՛ս նույն տեղը, նաև **Michael Copeland**, *The Difference Between Artificial Intelligence, Machine Learning, and Deep Learning* (NVIDIA blog, 29 July 2016), [<https://blogs.nvidia.com/blog/>]

խոր ուսուցմանը բնորոշ են դրա գործունեության վրա մարդու վերահսկողության կամ միջամտության նվազագույն մակարդակը և ոչ թափանցիկ լինելը: Ուշագրավ է, սակայն, որ այս համակարգն աշխատում է սահմանափակ համատեքստում ու չի կարող իր ոլորտից կամ ծրագրավորված գործառնությունից դուրս առաջադրանքներ կատարել և արագ հարմարվել նոր իրավիճակներին²⁸: Այդ պատճառով այն ընդունվում է որպես *թույլ կամ նեղ* արհեստական ինտելեկտ²⁹:

Այնուամենայնիվ, խոր մեքենայական ուսուցման նման զարգացումը հիմք է տալիս ոլորտի մի խումբ գիտնականների պնդելու, որ մի շարք զարգացած ԱԻ համակարգեր լիովին *ինքնավար*³⁰ են ու կարող են դառնալ ստեղծագործական գործընթացի ինքնուրույն դերակատարներ³¹ և ինքնուրույն աշխատանքներ գեներացնել³², կամ առնվազն ընդունում են, որ ստեղծագործական ընտրանքների մեծ մասն այլևս ծրագրավորողները չեն կատարում, և «այն բանի մեծ մասը», ինչը մենք սովորաբար կհամարեինք ստեղծագործական ազդակ, այժմ գալիս է մեքենայից³³: Ուստի մի շարք գիտական աշխատանքներում ազատորեն օգտագործվում է «*ինքնավար ԱԻ-ի ստեղծած աշխատանքներ*», «*մեքենայի հեղինակած աշխատանքներ*», «*լիովին ինքնավար համակարգչի գեներացրած աշխատանքներ*» և այլն³⁴: Հեղինակների մի մասն էլ, կասկածի տակ դնելով բոլորովին մարդու միջամտությունից անկախ ԱԻ արդյունքների ստացումը, պնդում է, որ ԱԻ-ն չի կարող իր առջև դնել նպատակներ, որոնց պետք է հասնել, որ ԱԻ-ն կարող է բարելավել նպատակին հասնելու ուղիները, բայց չի կարող փոխել այն,

2016/07/29/whats-difference-artificial-intelligence-machine-learning-deep-learning-ai/]

²⁸ Տե՛ս [https://medium.com/@tjajal/distinguishing-between-narrow-ai-general-ai-and-super-ai-a4bc44172e22]

²⁹ Տե՛ս **Kiseleva A.**, նշվ. աշխ., էջ 8-9:

³⁰ Հատկանշական է նաև, որ Մտանդարտացման միջազգային կազմակերպությունը «Ռոբոտներ և ռոբոտական սարքեր-բառարան»-ում ինքնավարությունը սահմանում է առաջադրանքների կատարման ունակություն ներկա վիճակի և զգայարանքի հիման վրա առանց մարդու միջամտության, *Robots and Robotic Device —Vocabulary, Int'l Org. For Standardization*, [https://www.iso.org/obp/ui/#iso:std:iso:8373:ed-2:v1:en]

³¹ Տե՛ս **Hristov Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Dilemma* (September 1, 2016). IDEA: The IP Law Review, Vol. 57, No. 3, 2017, էջ 435-436: [SSRN: https://ssrn.com/abstract=2976428]

³² Տե՛ս **Robert Yu**, *The Machine Author: What Level of Copyright Protection Is Appropriate for Fully Independent Computer-Generated Works?* 165 U. Pa. L. Rev., էջ 1245 (2017), [https://scholarship.law.upenn.edu/penn_law_review/vol165/iss5/5]

³³ Տե՛ս **Andres Guadamuz**, *Do Androids Dream of Electric Copyright? Comparative Analysis of Originality in Artificial Intelligence Generated Works* (June 5, 2017). Intellectual Property Quarterly, 2017 (2), [SSRN: https://ssrn.com/abstract=2981304]

³⁴ Սակայն այդ գիտնականները մարդկային և արհեստական ստեղծագործականությունը չեն հավասարեցնում և ընդունում են խնդրահարույց հարցերը յուրօրինակության ու հեղինակության հայեցակարգերի վերաբերյալ և քննարկում են ԱԻ առաջացրած արդյունքների նկատմամբ դրանց կիրառելիության հնարավորությունը: Ուստի նման եզրույթաբանության օգտագործումը, կարծում ենք, **պարզապես ասպագային կողմնորոշված մտտեցման դրսևորում է**: Մենք գտնում ենք, որ ԱԻ զարգացման տվյալ փուլում իրերի դրույթունն առավել ճիշտ է արտահայտել «առավելագույն ինքնավարություն ունեցող արհեստական ինտելեկտի առաջացրած կամ ստացած արդյունքներ» եզրույթաբանությամբ:

որ դեռևս մարդու մենաշնորհին է սահմանել ԱԻ գործունեության ու լորտներն ու նպատակները³⁵: Առավել արմատական հեղինակները բացարձակապես մերժում են ինքնավար ԱԻ գաղափարը³⁶ նշելով, որ մեքենայի արդյունքի ցանկացած *ակնհայտ ստեղծագործականություն* ուղղակիորեն վերագրվում է ԱԻ համակարգը ստեղծած ծրագրավորողին կամ այն օգտագործողին. ոչ մի մեքենա չի կարող ինքնուրույն լինել ստեղծագործականության աղբյուր³⁷:

Նախ, ԱԻ ինքնավարությունն ասելով՝ հասկանում են դրա անկախությունը մարդու վերահսկողությունից, ազդեցությունից կամ միջամտությունից որոշակի արդյունքի ստացման գործընթացում: Մենք գտնում ենք, որ *թույլ արհեստական ինտելեկտի* ներկա դարաշրջանում առավել զարգացած ԱԻ համակարգերը կարող են ունենալ առավելագույն, բայց ոչ բացարձակ ինքնավարություն մարդու միջամտությունից: Սակայն երբ հարցը դիտարկում ենք այդ միջամտության բնույթի տեսանկյունից՝ այն զուտ տեխնիկական, կազմակերպչական, թե նաև ստեղծագործական է, և վերլուծում ենք ԱԻ *արդյունքների ձեռքբերման* գործընթացի քայլերը, ապա ինքնավար ԱԻ գոյության օգտին բերվող փաստարկները ևս համոզիչ են դառնում, քանի որ նման ԱԻ կողմից որոշակի արդյունքի ձեռք բերման գործընթացում հեշտ է բացահայտել մարդու տեխնիկական կամ կազմակերպչական, բայց ոչ ստեղծագործական միջամտությունը:

Մասնագիտական գրականության մեջ նշվում են ԱԻ *արդյունքների ձեռք բերման* գործընթացի **երեք հիմնական քայլերի** մասին³⁸: I) ԱՀ համակարգի ստեղծում, որն ունակ է շրջակա միջավայրից տվյալներ ստանալու, մեկնաբանելու և սովորելու դրանցից, դրանց համապատասխան ու ճկուն վարքագիծ դրսևորելու և գործողություններ կատարելու, ինչն օգնում է ԱԻ համակարգին որոշակի ժամանակահատվածում հասնելու որոշակի նպատակի: Այդ նպատակը որոշում է մարդը: Տվյալ դեպքում որպես նպատակ ենթադրվում է, որ մարդու ստեղծած աշխատանքներին նման արդյունք կստացվի: II) Տվյալների մուտքը ԱԻ համակարգ. դրանք կարող են լինել արվեստի, գրականության կամ այլ գործեր և ստացվել տարբեր աղբյուրներից, օրինակ՝ ինտերնետից՝ որոշակի ընտրանքով: Այստեղ հնարավոր է երկու տարբերակ. ա) տվյալներ-

³⁵ Տե՛ս **Spindler, G.** *Copyright Law and Artificial Intelligence*. IIC50, էջ 1049–1051 (2019), <https://rdcu.be/b3CSD>; **Annemarie Bridy**, *Coding Creativity: Copyright and the Artificially Intelligent Author*, 2012 Stan. Tech. L. Rev. 1, 3, էջ 10:

³⁶ Դա կոչվում է “Amanuensis” հայեցակարգ, տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 9, հղում 19; **Jane C. Ginsburg & Luke Ali Budiardjo**, *Authors and Machines*, Berkeley Tech. L.J., էջ 343, 402 (2018):

³⁷ Տե՛ս նույն տեղը:

³⁸ Տե՛ս AIPPI 2019-Study Question. *Copyright/Data Copyright in artificially generated works. Summary Report* by **Jonathan P. Osha, Anne Marie Verschuur and Ari Laakkonen, Guillaume Henry, Ralph Nack and Lena Shen**, July 1, 2019, էջ 2-3, տե՛ս նաև **Tim Dornis**, նշվ. աշխ., էջ 10, որտեղ նկարագրվում է այդ գործընթացը չորս քայլերով:

րը կամ դրանց ընտրանքի չափանիշները (պարամետրերը) մարդու կողմից են ընտրվում, և բ) տվյալները կամ դրանց ընտրանքի չափանիշերը մարդու կողմից չեն ընտրվում: **III)** ԱԻ համակարգի կողմից նոր արդյունքի ստացում: Այստեղ ևս հնարավոր է երկու տարբերակ. ա) մարդը կատարում է ստացված նոր արդյունքներից մեկի որակական կամ էսթետիկ ընտրություն, բ) որևէ մարդկային միջամտություն չկա նոր արդյունքներից մեկի ընտրության հարցում³⁹:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հնարավոր են երկու իրավիճակներ⁴⁰: **Առաջին**, երբ ԱԻ-ն ստանում է որևէ արդյունք մարդու անմիջական ուղղորդմամբ կամ ստեղծագործական ներդրման շնորհիվ, իսկ ԱԻ օգտագործվում է որպես գործիք սահմանված նպատակին հասնելու համար: Օրինակ, երբ ստեղծվում է նկար հեղինակի կողմից, որը ընտրել է գույները, վրձնի չափը, տեսակը և որոշակի պարամետրեր է սահմանել ԱԻ ալգորիթմի մեջ: Այս դեպքում թեև հեղինակը չի կարող հստակ կանխատեսել ԱԻ միջոցով ստեղծվելիք նկարի վերջնական տեսքը, նա ուղղակիորեն ներդրում է ունեցել այն ստեղծելու գործում և ակնկալել է որոշակի վերջնարդյունք: Երկրների մեծ մասի օրենսդրություններով նման արդյունքը կհամարվի *ԱԻ օժանդակությամբ* ստեղծված ստեղծագործություն և ԱԻ ծրագրավորած անձը կարող է հեղինակ ճանաչվել⁴¹. Իհարկե, գործից գործ պետք է գնահատվի աշխատանքի՝ յուրօրինակության ու հեղինակության չափանիշներին բավարարելը: **Երկրորդ իրավիճակ**, երբ մարդը ստեղծում է ավելի զարգացած ԱԻ՝ որոշակի նպատակի հասնելու համար, սահմանում է տվյալների պարամետրեր և ստացման աղբյուրը: Մեքենայական ուսուցման ալգորիթմները սովորում են ծրագրավորողի պարամետրերին համապատասխան ստացած տվյալներից և սկսում աշխատանքի նոր մաս ստանալ ամբողջ գործընթացում *ինքնուրույն որոշումներ կայացնելով*⁴²: Օրինակ, երբ երաժշտություն ստեղծելու նպատակով ծրագրավորված ԱԻ-ն ինքնուրույն ընտրում է մելոդիան, հարմոնիան, տոնայնությունը և ռիթմը⁴³: Այդ դեպքում ընդունվում է, որ ԱԻ ստացած արդյունքն առանձնացված է մարդկային դերակատարի սկզբնական ներդրումից (ծրագրակազմի (software) ներդրում կամ տվյալների մուտքագրում), ուստի մարդն այլևս անմիջապես չի ազդում և չի որոշում արդ-

³⁹ Տե՛ս նույն տեղը:

⁴⁰ Նշվում է ևս մեկ իրավիճակի մասին, երբ արդյունքը ստացվում է մարդու և մեքենայի համատեղ «ստեղծագործականության» շնորհիվ՝ որպես «մասամբ համակարգչի գեներացրած աշխատանք», օրինակ, ստեղծագործական մելոդիան (մարդու կողմից) և ստեղծագործական հարմոնիան, բասը և ռիթմը (ԱԻ կողմից), տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 9, հրում 20:

⁴¹ Տե՛ս **Hristov Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Dilemma*, 2016, նշվ. աշխ., էջ 435:

⁴² Տե՛ս **Michie D., Spiegelhalter D.J., & Taylor, C.C.** *Machine learning, neural and statistical classification* (Springer 1994):

⁴³ Տե՛ս, օրինակ, **Amper Music**, [<https://www.ampermusic.com>] [<https://perma.cc/4AQB-B7NC>]

յունքը, ինչն անկանխատեսելի է⁴⁴: Ընդունվում է, որ ԱԻ ծրագրավորողի սկզբնական ստեղծագործական ներդրումն այդ դեպքում չի հասնում արտադրության մակարդակի և չի արտացոլվում ստացած արդյունքի ստեղծագործականության մեջ⁴⁵: Այսինքն՝ ստացվում են արդյունքներ, որոնք ունեն ակնհայտ ստեղծագործական արտահայտություն, և որոնք բխում են ծրագրի գործողությունից, սակայն չեն կարող համարվել ուղղակիորեն մարդկային աղբյուրից ստացված⁴⁶: Ահա, նման ինքնավարություն ունեցող ԱԻ ձեռք բերած արդյունքների իրավական պաշտպանության հարցերն էլ քննարկվում են սույն հոդվածում:

ԱԻ ինքնավարության հարցի վերաբերյալ վերոշարադրյալը պահանջում է ինքնուրույն հետազոտությամբ ավելի խորը ուսումնասիրել համակարգչի և ստեղծագործական գործընթացի միջև կապը, *արհեստական ստեղծագործականության* գոյության հնարավորությունը և մարդկային ստեղծագործականության հետ դրա հարաբերակցությունը: Դա տեղին է հատկապես նոր տեխնոլոգիաների և հեղինակային իրավունքի փոխազդեցության ասպեկտներին իրավական նշանակություն տալու միջազգային հանրության ներկայիս պատրաստականության համատեքստում: Եթե մենք ընդհանրապես չենք դիտարկելու *արհեստական ստեղծագործականության* գոյության հնարավորությունը, ԱԻ ձեռք բերած արդյունքների՝ մտավոր սեփականության օբյեկտներին համադրելիության կամ թեկուզ ձևական հավասարեցման հնարավորությունը, ԱԻ իրավասուբյեկտության հնարավորությունը թեկուզ հաջորդ սերնդի ԱԻ տեսանկյունից, սպա հարց է ծագում, թե արդյոք նոր տեխնոլոգիաները և մտավոր սեփականության իրավունքն ընդհանրապես հարաբերակցվում են:

ԱԻ ինքնավարության հարցը մասնագիտական գրականության մեջ դիտարկվում է *արհեստական ստեղծագործականության*⁴⁷ համատեքստում: Նշում է, որ *ինտելեկտ* եզրույթը ներառում է մի շարք բաղադրիչներ, այդ թվում՝ *ստեղծագործականություն*⁴⁸, ինչն էլ իր հերթին

⁴⁴ Նշվում է նաև, որ խոսքն այնպիսի արդյունքների մասին է, որոնք գոյություն ունեցող աշխատանքների խմբագրումներ կամ ածանցյալ ստեղծագործություններ չեն: Դա այն դեպքում կլինի, եթե ծրագրակազմը կամ դրա մասերն ուղղակիորեն անփոփոխ կատարված լինեին ստացած արդյունքում, կամ երբ արդյունքն ուղղակիորեն հենված լիներ ծրագրակազմի վրա: Ուստի, արդյունքը չի կրկնօրինակում ծրագրակազմը կամ դրա մասը, տե՛ս **Tim Dornis**, նշվ. աշխ., էջ 50-51, հղում 179-181:

⁴⁵ Տե՛ս **Tim Dornis**, նշվ. աշխ., էջ 50, հղում 184:

⁴⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 9, հղում 21: Նման արդյունքների օրինակների վերլուծություն տե՛ս **Andres Guadamuz**, *Do Androids Dream of Electric Copyright?*, նշվ. աշխ., էջ 2-4; **Hristov, Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Survey*, նշվ. աշխ., էջ 2-5, [<https://ssrn.com/abstract=3490458>]:

⁴⁷ Այս հասկացության ծագման և այդ կապակցությամբ առաջացող հարցերի վերաբերյալ մի շարք տեսակետներ վերլուծված են պրոֆեսոր Թիմ Դորնիսի աշխատանքում:

⁴⁸ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 12, հղում 28; նաև **David Levy**, *Robots Unlimited: Life In A Virtual Age* 149 (2005); **Francisco Câmara Pereira**, *Creativity And Artificial*

կախված է, թե արդյոք ստեղծագործական գործընթացը կամ արդյունքը նոր է, տեղին կամ օգտակար⁴⁹: Պրոֆեսոր Թիմ Դորնիսը, ընդգծելով, որ արհեստական ինտելեկտի դեպքում ստեղծագործականությունը հաճախ կապվում է մարդու ազդեցությունից ԱԻ անկախության և ինքնավարության հետ, քննարկում է նաև *արհեստական ստեղծագործականությունը* օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշների, այլ կերպ *արդյունքին ուղղված* կամ *գործընթացին ուղղված* մոտեցումների համատեքստում: Առաջին դեպքում (օբյեկտիվ չափանիշ, Ալան Թյուրինգի թեստ⁵⁰) հիմք է ընդունվում արդյունքը որպես ավարտուն աշխատանք, և համարվում է, որ այն բավարար ստեղծագործական է, եթե այդպիսին կհամարվեր մարդու կողմից ստեղծված լինելու դեպքում: Երկրորդ դեպքում (սուբյեկտիվ չափանիշ, Ջոն Սիրլի թեստ⁵¹) շեշտը դրվում է ստեղծագործական գործընթացի վրա, որում պահանջվում է մարդկային ստեղծագործական կայծի առկայություն, մտադրվածություն՝ որպես փաստացի ինտելեկտի նախապայման: Ըստ այս մոտեցման՝ ավարտուն արդյունքն ինքնին չի կարող ստեղծագործականության որոշման բավարար չափանիշ լինել, քանի որ դա կլինի ընդամենը ԱԻ կանոններին մեխանիկական համապատասխանություն՝ չունենալով իրական գիտակցություն⁵²: Այսինքն՝ Թյուրինգի թեստը կիրառելիս ԱԻ ձեռք բերած մի շարք արդյունքներ, որոնք առերևույթ ստեղծագործական բնույթի են, հնարավոր կլինի համադրել մարդու ստեղծագործությունների հետ կամ հավասարեցնել դրանց: Սիրլի թեստի կիրառման դեպքում կեզրահանգենք, որ չկա ստեղծագործականություն, քանի որ արհեստական ինտելեկտը չունի մարդկային կամք, ուստի անկախ չէ⁵³: Ստեղծագործական գործընթացը պահանջում է արդյունքի նվազագույն պատահականություն և դերակատարի՝ ինքնաքննադատման ու իր վարքագիծը փոխելու ունակություն⁵⁴: Մարդկային գիտակցություն ունենալու պահանջը մեծ խոչընդոտ է ԱԻ *ստեղծագործականությանը*, ինչը, հնարավոր է, երբեք չհաղթահարվի⁵⁵: Ընդունելով, որ ԱԻ ինքնա-

Intelligence 1(2007); **Shlomit Yanisky-Ravid**, *Generating Rembrandt: Artificial Intelligence, Copyright, and Accountability in the 3A Era—The Human-Like Authors Are Already Here—A New Model*, 2017, Mich. St. L. Rev., էջ 659, 679:

⁴⁹ Տե՛ս **Roger Schank & Christopher Owens**, *The Mechanics of Creativity, in The Age of Intelligent Machines* էջեր 394, 395 (Ray Kurzweil ed., 1990); **Margaret A. Boden**, *Computer Models of Creativity*, 30 AI Mag., էջ 23, 24 (2009); **Panagiotis G. Kampylis & Juri Valtanen**, *Redefining Creativity—Analyzing Definitions, Collocations, and Consequences*, 44, J. Creative Behav. էջ 191, 198 (2010):

⁵⁰ Տե՛ս **Turing A.**, *Computing Machinery and Intelligence*, 59 Mind, էջ 433, 434 (1950):

⁵¹ Տե՛ս **John R. Searle**, *Minds, Brains, and Programs*, 3 Behav. & Brain Sci. էջ 417, 417-18 (1980):

⁵² Տե՛ս նույն տեղը, էջ 418; նաև՝ **Lawrence B. Solum**, *Legal Personhood for Artificial Intelligences*, 70 N.C. L. REV., էջ 1231, 1267 (1992):

⁵³ Տե՛ս **Schank & Owens**, նշվ. աշխ., էջ 394; **David Gelernter**, *The Muse In The Machine: Computerizing the Poetry of Human Thought*, էջ 83 (1994):

⁵⁴ Տե՛ս **Margaret A. Boden**, *The Creative Mind: Myths and Mechanisms* էջ 163, 233 (2d ed. 2004):

⁵⁵ Տե՛ս նույն տեղը:

վարության, ինքնավստահության և զգացմունքային հարցերն ավելի են բարդանալու տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց, պրոֆեսոր Թիմ Դորնիսը փաստում է, որ լայնորեն ճանաչվում է ԱԻ արդյունքի ստացման և մարդու ստեղծագործականության միջև կապի կորուստը,⁵⁶ որ ներկայումս ԱԻ-ն ավելի է մոտեցել մարդու ուղեղի և նրա գործառնությունների ընդօրինակմանը ու թեև հնարավոր է, որ ԱԻ երբեք կատարելապես չհամապատասխանի մարդկային բոլոր կարողություններին, արհեստական ինտելեկտի ձեռք բերած արդյունքների համատեքստում արհեստական և մարդկային ինտելեկտների ավանդական տարբերություններն ու բաժանումն այլևս ճիշտ չի թվում⁵⁷:

Այսպիսով, ԱԻ ինքնավարության հարցը քննարկվում է *արհեստական ստեղծագործականության*, վերջինս էլ՝ օբյեկտիվ (արդյունքին ուղղված) և սուբյեկտիվ (գործընթացին ուղղված) չափանիշների տեսանկյունից: Մեր կարծիքով, խոսքը ոչ թե բացարձակ ինքնավար ԱԻ մասին է, այլ առավելագույն ինքնավարություն ունեցող ԱԻ, որտեղ մարդկային միջամտությունը արդյունքի ստացման գործում նվազագույն է և չի հասնում ստեղծագործականության մակարդակի: Ուստի ստացած արդյունքն ունի ակնհայտ ստեղծագործական բնույթ, բխում է ծրագրի գործողությունից, սակայն չի կարող դիտվել որպես ուղղակիորեն մարդկային աղբյուրից բխող⁵⁸: Ընդունում ենք, որ ստեղծագործելը դեռևս տիպիկ մարդկային ունակություն է, սակայն չենք բացառում *արհեստական ստեղծագործականության* գոյության հնարավորությունը, բայց ոչ հեղինակային իրավունքում ընկալվող մարդ-հեղինակի ավանդական ստեղծագործականությանը հավասարեցնելու առումով: Հեղինակային իրավունքում, որտեղ պաշտպանունակության կարևոր պայմաններ են «յուրօրինակության» և «հեղինակության» չափանիշները, բավարար չէ ոչ ԱԻ ինքնավարությունը՝ որպես դրա *ստեղծագործականության* չափման միավոր, ոչ Թյուրինգի օբյեկտիվ չափանիշը՝ որպես արդյունքի *յուրօրինակության* չափման միավոր, ուստի *արհեստական ստեղծագործականությունը* և օբյեկտիվ չափանիշով դրա ընկալումը դեռևս չեն կարող որոշիչ լինել հեղինակային իրավունքի տեսանկյունից, և, ինչպես կտեսնենք ստորև, հեղինակային իրավունքի պաշտպանությունն անհասանելի է նման արդյունքների համար: Այլ հարց է, որ չենք կարող նաև անտեսել զարգացած ԱԻ համակարգերի հնարավորությունը ձեռք բերելու մարդու ստեղծած աշխատանքներին համադրելի, նույնիսկ գերազանցելի արդյունքներ, հետևաբար, արժանի որևէ իրավական պաշտպանության: Առավել ցածր մակարդակի

⁵⁶ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 8, հղում 19:

⁵⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 15-16:

⁵⁸ Պրոֆեսոր Թիմ Դորնիսը դրանք անվանում է emergent works՝ մեկնաբանելով որպես ակնհայտ ստեղծագործական արտահայտման աշխատանքներ, որոնք բխում են ծրագրի գործողությունից, բայց չեն կարող դիտվել որպես ուղղակիորեն մարդկային աղբյուրից բխող, տե՛ս նշվ. աշխ., էջ 9, հղում 21:

պաշտպանության տրամադրման հնարավորության դեպքում, օրինակ, հարակից իրավունքի ինստիտուտի ներքո, *արհեստական ստեղծագործականությունը* և Թյուրինգի օբյեկտիվ չափանիշն արդեն կարող են դեր ունենալ:

Արհեստական ինտելեկտի ձեռք բերած արդյունքների պաշտպանության հնարավորությունը հեղինակային իրավունքի ինստիտուտով «Յուրօրինակություն» և «հեղինակություն» հայեցակարգերը:

Յուրօրինակությունը (օրիգինալությունը) հեղինակային իրավունքի հիմնասյունն է: Այն գիտության, գրականության և արվեստի բնագավառի որոշակի օբյեկտին հեղինակային իրավունքի պաշտպանության տրամադրման պարտադիր պայմաններից («sine qua non») է հեղինակային իրավունքի բոլոր ռեժիմներում⁵⁹: Ավանդաբար, յուրօրինակության չափանիշը տարբեր կերպ է մեկնաբանվել և օգտագործվել մայրցամաքային և անգլոամերիկյան իրավական համակարգի երկրներում: Դա պայմանավորված է ոչ միայն երկու համակարգերում հեղինակային իրավունքի հայեցակարգերի էական տարբերություններով, այլև այն բանով, որ յուրօրինակության ուղղակի սահմանումը տրված չէ ոչ միջազգային, ոչ էլ ներպետական օրենսդրություններով, իսկ մայրցամաքային իրավունքի համակարգի երկրների հեղինակային իրավունքի մասին օրենքները սկզբնավորում են յուրօրինակության ավելի խիստ իմաստներ⁶⁰, քան անգլոամերիկյան համակարգի երկրների նախադեպային իրավունքում ձևավորված համեմատաբար թեթև չափանիշներն են⁶¹: Մայրցամաքային իրավական համակարգի երկրներում հեղինակային իրավունքի հիմքում ընկած է մտավոր սեփականության *Անձի անհատականության տեսությունը* (Personality Theory), ինչն էլ պայմանավորում է այդ համակարգում հեղինակի ու ստեղծագործության միջև անքակտելի կապի և միմյանցից անբաժան լինելու մոտեցման ընդունումը⁶²: Յուրօրինակության չափանիշն ըստ էության կապվում է հեղինակության հետ⁶³, ընդ որում, ինչպես կտեսնենք ստորև, ընդունվում է, որ միայն մարդը կարող է լինել հեղինակ:

⁵⁹ Տե՛ս **Wani Aftab Jeelani**, *The Concept of Originality under Copyright Law: An Analysis of Judicial Interpretation and Juristic Opinions*. The IUP Law Review, Vol. IV, No. 4, October 2014, էջ 1, [<https://ssrn.com/abstract=2639531>]:

⁶⁰ Տե՛ս **Rosati Eleonora**, *Judge-made EU copyright harmonization: the case of originality*, Florence: European University Institute, 2012, EUI PhD theses, Department of Law Retrieved from Cadmus, European University Institute Research Repository, էջ 3, [<http://hdl.handle.net/1814/24616>]:

⁶¹ Տե՛ս նույն տեղը:

⁶² Տե՛ս, օրինակ, **D. Burkitt**, *Copyrighting culture – the history and cultural specificity of the Western model of Copyright* (2001) 2 IPQ, էջ 146, 152:

⁶³ Հեղինակությունը ցանկացած իմաստով պետք է մեկնաբանել յուրօրինակության հետ, թեև հեղինակությունն ինքնին հիմնված չէ յուրօրինակության վրա, այլ ներառում է «անհատականության», «պատասխանատվության» և «եզակի գործ» իմաստները, տե՛ս **A. Sechin**, *On plagiarism, originality, textual ownership, and textual responsibility*. The case of *Jacques le fatalist*, in **R. McGinnis** (ed) *Originality and intellectual property in the French and English enlightenment* (2009), էջ 102, 103:

Մինչդեռ անգլոամերիկյան, մասնավորապես ԱՄՆ համակարգում *հեղինակության/իրավատիրության* հարցն ուղղակիորեն չի կապվում հեղինակի անհատականության հետ, չի ընդունվում նաև հեղինակի և ստեղծագործության միջև անքակտելի կապի մոտեցումը: Այստեղ թույլատրվում է նաև կորպորատիվ (իրավաբանական անձ) իրավատեր/հեղինակի գոյությունը և երաշխավորվում է հեղինակային իրավունքների ազատ փոխանցումը՝ առանց հեղինակային և բարոյական իրավունքների՝ մայրցամաքային իրավական համակարգում սահմանված սահմանափակումների⁶⁴: Այս համակարգը տարբերում է փաստացի հեղինակ (author-in-fact) և իրավական հեղինակ (author-in-law) հասկացությունները, իսկ «վարձու աշխատանք» (the “work made-for-hire”) հայեցակարգի շնորհիվ՝ հեղինակային իրավունքներն անմիջականորեն վերագրվում են հեղինակի գործատուին (կամ հանձնարարողին)⁶⁵՝ առանց աշխատանքում վերջինիս որևէ ստեղծագործական ներդրման (ինչը, կարծես, նման է ԱԻ ձեռք բերած արդյունքի դեպքին), այսինքն՝ իրավական ֆիկցիայի միջոցով գործատուն դառնում է աշխատանքի իրավական հեղինակը: Այս ամենի հաշվառմամբ թվում էր, թե այս համակարգում ԱԻ ձեռք բերած արդյունքների իրավական պաշտպանությունն առավել հեշտ պետք է լիներ, քան մայրցամաքային իրավական համակարգում, սակայն նախադեպային իրավունքի զարգացումը և, օրինակ, ԱՄՆ Հեղինակային իրավունքի գործակալության պրակտիկ մեկնաբանությունները⁶⁶ վկայում են, որ այստեղ ևս ստեղծագործելը դեռևս համարվում է մարդու մենաշնորհը, ուստի «մարդ-հեղինակի» պահանջը այստեղ ևս խիստ է դրված:

Փոքր-ինչ այլ է պատկերը Միացյալ Թագավորությունում (ՄԹ), որտեղ օրենսդրությամբ ամրագրված է *համակարգչի գեներացրած աշխատանքների* իրավական պաշտպանությունը, սակայն, ինչպես կտեսնենք այդ մասին ստորև շարադրանքում, անորոշությունները և այդ կարգավորման կիրառման կապակցությամբ նախադեպերի պակասը⁶⁷ թույլ են տա-

⁶⁴ Համեմատական վերլուծությունը տե՛ս, օրինակ, **Goldstein & Hugenholtz**, *International Copyright: Principles, Law, and Practice*, § 6.1:

⁶⁵ Որոշ հեղինակներ նմանեցնում են “work-for-hire” հայեցակարգի կիրառումը (երբ աշխատանքում գործատուի որևէ ստեղծագործական ներդրման, իրավական ֆիկցիայի միջոցով հեղինակային իրավունքներն անմիջականորեն վերագրվում են գործատուին) ԱԻ արդյունքի ստացման հետ և առաջարկում են այդ հայեցակարգը կիրառելով հեղինակային իրավունքները վերագրել ԱԻ ծրագրավորողին կամ օգտագործողին, բայց նաև նշում են, որ այդ լուծումը ևս պահանջում է օրենսդրական փոփոխություն, հետևաբար բարդ է հասնել դրան, տե՛ս **Kalin Hristov**, *Artificial Intelligence and the Copyright Dilemma*, նշվ. աշխ., էջ 431, 445:

⁶⁶ Տե՛ս U.S. Copyright Office, Compendium U.S. Copyright Office Practices. § 306 (3d ed. 2017): Նշենք նաև *Naruto v. Slater*, No. 16-15469 (9th Cir. 2018) գործը, որով կապիկի կատարած սելֆի լուսանկանների նկատմամբ նրա հեղինակային իրավունքի ճանաչման հարց էր բարձրացվել. 2014 թ. ԱՄՆ հեղինակային իրավունքի գործակալությունը հայտարարեց (և հետո էլ դատարանը հաստատեց), որ ոչ մարդու կողմից ստեղծված գործերը հեղինակային իրավունքի օբյեկտ չեն կարող լինել:

⁶⁷ Տե՛ս **Andres Guadamuz**, *Do Androids Dream of Electric Copyright?*, նշվ. աշխ., էջ 9:

լիս եզրակացնել, որ այն ավելի շատ գործի հանգամանքներից կախված լուծման տարբերակ է, քան կանոն, և ավելի շատ հանգելու է մարդ-հեղինակի նվագագույն ստեղծագործականության առկայության պահանջին՝ դրանով իսկ քիչ հավանական դարձնելով ինքնավար ԱԻ ձեռք բերած արդյունքների պաշտպանությունը այս կարգավորման շրջանակում:

Այսպես, մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են յուրօրինակության (օրիգինալության) հիմնական չափանիշները⁶⁸: Քննարկենք դրանք առանձին-առանձին:

ա) «Հեղինակի սեփական մտավոր ստեղծագործություն» մայրցամաքային համակարգ:

Այս չափանիշի հիմքում դրված է հեղինակի անձնական, անհատական ներդրումը աշխատանքի ստեղծման մեջ. աշխատանքը պետք է լինի հեղինակի մտքի գործը, այլ ոչ թե զուտ նրա ջանքերի ու հմտության արդյունքը⁶⁹: Սա հիշեցնում է ֆրանսիական հեղինակային իրավունքի «*droit d'auteur*» հայեցակարգը, որով պաշտպանություն է տրամադրվում այն աշխատանքներին, որոնք կրում են «*l'empreinte du talent créateur personnel*» անձնական ստեղծագործական տաղանդի հետքը⁷⁰: Գերմանիայի «Հեղինակային իրավունքի մասին» ակտի (Ակտ) 2(2) բաժնի համաձայն՝ *աշխատանք* են համարվում միայն *հեղինակի սեփական մտավոր ստեղծագործությունները*⁷¹, իսկ Ակտի 7-րդ բաժնում սահմանվում է, որ *հեղինակն աշխատանքը ստեղծողն է*, և թեև չի նշվում, որ նա ֆիզիկական անձ է, Ակտի 11-րդ բաժնը սահմանում է, որ հեղինակային իրավունքը *պաշտպանում է հեղինակին աշխատանքի նկատմամբ նրա մտավոր ու անձնական հարաբերություններում*: Իտալիայի հեղինակային իրավունքի օրենսդրությամբ պաշտպանության ենթակա են *մտավոր աշխատանքները, որոնք ունեն ստեղծագործական բնույթ*⁷²: Իսկ ահա Իսպանիայի հեղինակային իրավունքի մասին օրենքի 5-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում է, որ *աշխատանքի հեղինակն այն ստեղծող ֆիզիկական անձն է*: Հատկանշական է, որ ԵՄ հեղինակային իրավունքի ներդաշնակեցման գործընթացի շրջանակում օրիգինալության չափանիշը ևս որոշակի չափով ներդաշնակեցվել է, մասնավորապես՝ «Համակարգչային ծրագրերի մասին», «Տվյալների բազայի մասին» ու «Հեղինակային իրավունքի և որոշ հարակից իրավունքների պաշտպանության պայմանների մասին» (Պայմանների դիրեկտիվ) դիրեկտիվներում⁷³ օրիգինալությունը սահման-

⁶⁸ Ուշադրության արժանի առանձնահատկություններ կան Ավստրալիայի, Կանադայի, Հնդկաստանի հեղինակային իրավունքում:

⁶⁹ Տե՛ս **Rosati Eleonora**, նշվ. աշխ., էջ 73, հղում 219:

⁷⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 103:

⁷¹ Տե՛ս [https://www.gesetze-iminternet; [https://www.gesetze-im-internet.de/englisch_urhg/englisch_urhg.htm]

⁷² Տե՛ս «Հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 6-րդ հոդված, [https://www.wipo.int/edocs/lexdocs/laws/en/it/it211en.pdf]

⁷³ Տե՛ս Council Directive 2009/24, հոդվ. 1(3), 2009 O.J. (L 111) 16, 18 (EC); Council Di-

վել է որպես *հեղինակի սեփական մտավոր ստեղծագործություն* (author's own intellectual creation): Ավելին, Պայմանների դիրեկտիվի պրեամբուլայում (կետ 16) օրիգինալ աշխատանքները սահմանվում են որպես հեղինակի ինքնուրույն մտավոր ստեղծագործություններ, որոնք արտացոլում են նրա անհատականությունը: Այսինքն՝ ոչ միայն հեղինակը պետք է մարդ լինի, այլև աշխատանքը պետք է արտացոլի հեղինակի անհատականությունը:

Արդարադատության եվրոպական դատարանը (Դատարան) *հեղինակի սեփական մտավոր ստեղծագործություն* չափանիշը ևս մեկնաբանում է որպես *մարդ-հեղինակի* առկայության պահանջ: *Infopaq-ի* գործով⁷⁴ Դատարանը պետք է գնահատեր, թե արդյոք լուրերի հոդվածներից պատրաստված կարճ քաղվածքը ենթակա է հեղինակային իրավունքի պաշտպանության, և գտավ, որ միայն բառերը ենթակա չեն պաշտպանության, սակայն նախադասությունները, նույնիսկ արտահայտությունները կարող են պաշտպանվել, եթե դրանք հեղինակի սեփական մտավոր ստեղծագործությունն են⁷⁵: Հաջորդ գործերում⁷⁶ այս չափանիշը տարածվեց բոլոր տեսակի աշխատանքների վրա: *Painer-ի* գործով⁷⁷, որը վերաբերում էր դիմանկար-լուսանկարի պաշտպանությանը, Դատարանն ավելացրեց առավել յուրահատուկ չափանիշ. մտավոր ստեղծագործությունը պետք է արտացոլի *հեղինակի անհատականությունը*⁷⁸, ինչը պահանջում է հեղինակի *ազատ և ստեղծագործական ընտրանքներ*, ինչպես նաև նրա ունակությունը՝ *դակել ստեղծագործությունն իր անձնական հպմամբ*⁷⁹: Այսպիսով, *ստեղծագործություն* և *մարդ-հեղինակ* այսպիսի անքակտելի կապի պայմաններում ակնհայտ է, որ մայրցամաքային իրավունքի համակարգում ԱԻ ձեռք բերած արդյունքը, որի դեպքում մարդ-հեղինակը կորցրել է հսկողությունը թե՛ դրանց ձեռք բերման գործընթացի և թե՛ արդյունքի նկատմամբ, չի կարող որևէ կերպ հավակնել պաշտպանվելու հեղինակային իրավունքով, թեև ստացված արդյունքը կարող է համադրելի կամ նույնիսկ գերազանցելի լինել մարդու ստեղծած ստեղծագործություններին:

բ) «Աշխատանք և հմտություն», «համակարգչի գեներացրած աշխատանքները». Միացյալ Թագավորություն:

Միացյալ Թագավորության «Հեղինակային իրավունքի, դիզայնի և

rective 96/90, հոդվ. 3(1), 1997 O.J. (L 13) 24, 25 (EC); Council Directive 2006/116, հոդվ. 6, 2006 O.J. (L 372) 12, 14 (EC):

⁷⁴ Տե՛ս Case C-5/08 *Infopaq International A/S v Danske Dagblades Forening* [2009] ECR I-06569:

⁷⁵ Տե՛ս նույն տեղը:

⁷⁶ Տե՛ս Case C-393/09 *Bezpečnostní softwarová asociace –Svaz softwarové ochrany (BSA) v Ministry of Culture of the Czech Republic* [2010] ECR I-13971:

⁷⁷ Տե՛ս Case C-145/10 *Eva-Maria Painer v Standard Verlags GmbH & Others* [2010] ECR I-12533:

⁷⁸ Տե՛ս Case C-145/10, պար. 88-94 (2011):

⁷⁹ Տե՛ս նույն տեղը, պար. 90-94:

արտոնագրերի մասին» 1988 թ. Ակտը (1988 թ. Ակտ) ամենառաջին օրինակն է⁸⁰, որում հստակ ամրագրվում է «համակարգչի գեներացրած աշխատանքների» իրավական պաշտպանությունը: Մինչ դրան անդրադառնալը նշենք, որ յուրօրինակության՝ ՄԹ-ում տարիներ շարունակ գործող *աշխատանք և հմտություն* կամ *հոնքի քրտինք* հայեցակարգը, որը ժամանակի ընթացքում ընդլայնվել է՝ *աշխատանք, հմտություն, դատողություն և ջանքեր*⁸¹, հիմնվում է այն գաղափարի վրա, որ աշխատանքը յուրօրինակ է, հետևաբար՝ ենթակա պաշտպանության, եթե դա հեղինակի աշխատանքի, հմտության, դատողության և ջանքերի արդյունք է՝ գրեթե ավելորդ համարելով *ստեղծագործականության* պահանջը⁸²: *Walter v Lane* գործով⁸³, որտեղ բանավոր խոսքը բառացիորեն վերարտադրվել էր թերթի նյութում, Դատարանը վճռեց, որ գրառումներ կատարելու գործընթացը պահանջում է *աշխատասիրություն և ջանքեր*, ուստի նման վերարտադրումը պաշտպանության ենթական է⁸⁴: *University of London* գործով⁸⁵ Դատարանը հստակեցրեց, որ *յուրօրինակ* բառը չի նշանակում, որ աշխատանքը պետք է լինի յուրօրինակ կամ նորարար մտքի արտահայտություն: Ընդ որում՝ չի պահանջվում, որ այդ արտահայտությունը օրիգինալ կամ նոր ձևով լինի, այլ՝ որ աշխատանքը պատճենված չլինի մեկ այլ աշխատանքից և բխի հեղինակից⁸⁶: Մակայն վերջին զարգացումները, այդ թվում՝ ԵՄ հեղինակային իրավունքի ներդաշնակեցման արդյունքում վերոնշյալ Դիրեկտիվներով⁸⁷ որոշակի կատեգորիայի աշխատանքների համար օրիգինալությունը որպես *հեղինակի սեփական մտավոր ստեղծագործություն* մայրցամաքային համակարգին հայտնի չափանիշը սահմանելը, ինչպես նաև դրան հաջորդած Դատարանի որոշումները⁸⁸, թույլ են տալիս որոշ գիտնականների եզրակացնել, որ Դատարանն ըստ էության փորձում է օրիգինալության՝ ընդամենը որոշակի կատեգորիայի աշխատանքների դեպքում ներդաշնակեցված չափանիշը տարածել նաև ՄԹ հեղինակային իրավունքի ավանդական կատեգորիայի աշխատանքների նկատմամբ՝ վտանգելով ՄԹ գործող օրիգինալության ավանդական՝ *աշխատանք, հմտություն, դատողություն և ջանքեր* չափանիշը և ստիպելով փոփոխություններ կատարել⁸⁹: Կարծիք կա, որ

⁸⁰ Նման կարգավորում նախատեսվում է Նոր Զելանդիայի, Հոնկոնգի, Հնդկաստանի և Իռլանդիայի օրենքներում:

⁸¹ Տե՛ս **Rahmatian A.** *Originality in UK Copyright Law: The Old "Skill and Labour" Doctrine Under Pressure.* IIC **44**, 4-34 (2013), էջ 5, [https://doi.org/10.1007/s40319-012-0003-4]:

⁸² Տե՛ս նույն տեղը, հղում 5:

⁸³ Տե՛ս [1900] A.C. 539, տե՛ս **Wani Aftab Jeelani**, նշվ. աշխ., էջ 5, հղում 23:

⁸⁴ Տե՛ս նույն տեղը:

⁸⁵ Տե՛ս *University of London Press v. University Tutorial Press* [1916] 2 Ch 601:

⁸⁶ Տե՛ս նույն տեղը:

⁸⁷ Խոսքը սույն հոդվածի հղում 73-ում թվարկված դիրեկտիվների մասին է:

⁸⁸ Խոսքը *Infopaq, Bezpec'nostni 'softwarova' asociace, Painer և Football Dataco* գործերի մասին է:

⁸⁹ Տե՛ս **Rahmatian A.**, նշվ. աշխ., էջ 4-5:

Temple-ի գործով⁹⁰ Դատարանը միավորում է *աշխատանք* և *հմտություն* չափանիշը *Infopaq-ի մտավոր ստեղծագործական ջանք* չափանիշի հետ և կրկնության միջոցով դրանք դարձնում համարժեք, նույնիսկ սահմանում է *հմտություն*, *աշխատանք/մտավոր ստեղծագործություն* չափանիշը⁹¹: Սա նշանակում է, որ 1988 թ. Ակտի 9(3) բաժինը ևս կարող է փոփոխության ենթարկվել:

Ակտի 9(3) բաժինը սահմանում է. «Համակարգչի գեներացրած գրական, դրամատիկ, երաժշտական կամ գեղարվեստական ստեղծագործության հեղինակը պետք է ճանաչվի այն անձը, ով ձեռնարկել է դրա ստեղծման համար անհրաժեշտ նախապատրաստությունները»: *Համակարգչի գեներացրած* եզրույթը բացատրվում է Ակտի 178-րդ բաժնում՝ *աշխատանքը համակարգիչը գեներացրել է այնպիսի հանգամանքներում, որում չկա ստեղծագործության մարդ-հեղինակ*: Մասնագիտական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ այստեղ անորոշություն կա առ այն, թե որն է *յուրօրինակության* չափանիշի անցողիկ շեմը՝ պաշտպանություն ստանալու համար⁹²: Հստակ չէ, թե մարդու մասնակցության չափը որքան և ինչ բնույթի պետք է լինի *անհրաժեշտ նախապատրաստությունները ձեռնարկելու* չափանիշը գնահատելիս⁹³: Այսինքն՝ սա ավելի շատ գործի հանգամանքներից կախված լուծման տարբերակ է, քան կանոն, ըստ այդմ՝ իրավատեր կարող են լինել համակարգչի օպերատորը, անձը, որը տվյալներ է տրամադրում, կամ ծրագրավորողը⁹⁴: Բոլոր դեպքերում կարևորն այն է, որ մարդ-հեղինակը պետք է ներդրում ունենա. ձեռնարկի անհրաժեշտ նախապատրաստություններ: Սա նշանակում է, որ եթե մենք մարդու ամենաչնչին ներդրումը, որը կարող է *կոճակ սեղմելը* լինել, չմեկնաբանենք որպես *անհրաժեշտ նախապատրաստություններ*, ապա զարգացած ԱԲ համակարգի գեներացրած աշխատանքները չեն ընկնի այս պաշտպանության տակ, քանի որ չեն բավարարի *մարդ-հեղինակի անհրաժեշտ նախապատրաստություններ* կատարած լինելու չափանիշը⁹⁵:

գ) «Նվազագույն ստեղծագործականության» չափանիշ. ԱՄՆ:

Այս չափանիշի սկիզբը դրվեց *Feist-ի* գործով⁹⁶, որում ԱՄՆ գերագույն դատարանը ժխտեց նախկինում կիրառվող *հոնքի քրտինք* հայեցա-

⁹⁰ Տե՛ս *Temple Island Collections Ltd v New English Teas Ltd and Another* (No. 2) [2012] EWPC 1:

⁹¹ Տե՛ս **Andres Guadamuz**, *Do Androids Dream of Electric Copyright?*, նշվ. աշխ., էջ 12, հղում 88:

⁹² Տե՛ս, օրինակ, **Lionel Bently & Brad Sherman**, *Intellectual Property Law*, էջ 117-18 (5th ed. 2018):

⁹³ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 1:

⁹⁴ Տե՛ս **L. Bently & B. Sherman**, նշվ. աշխ., էջ 128; **Colin R. Davies**, *An Evolutionary Step in Intellectual Property Rights—Artificial Intelligence and Intellectual Property*, 27 *Comp. L. & Sec. Rev.*, էջ 601, 608 (2011); **Tim W. Dornis** նշվ. աշխ., էջ 18, հղում 52:

⁹⁵ Տե՛ս **Emily Dorotheou**, *Reap the Benefits and Avoid the Legal Uncertainty: Who Owns the Creations of Artificial Intelligence?* 21 *Computer & Telecomm. L. Rev.*, էջ 85, 90-91 (2015):

⁹⁶ Տե՛ս *Feist Publications, Inc. v. Rural Telephone Service Co.*, 499 U.S. 340 (1991):

կարգը՝ եզրակացնելով, որ յուրօրինակ համարվելու համար ստեղծագործությունը ոչ միայն պետք է լինի ինքնուրույն ստեղծված, այլև ունենա *նվազագույն ստեղծագործականություն*: Դատարանը պետք է գնահատեր, թե արդյոք հեռախոսային գրացուցակը պաշտպանված է հեղինակային իրավունքով, և գտավ, որ փաստերը՝ անունները, հասցեները՝ ոչ, սակայն դրանց հավաքագրումները, այո, հեղինակային իրավունքով պաշտպանունակ են, եթե ունեն նվազագույն ստեղծագործականություն, քանի որ հեղինակն ընտրում է, թե ինչ փաստեր, ինչ հաջորդականությամբ դասավորել և ինչպես համակարգել տվյալները, որ կարդացողն այն օգտագործի արդյունավետորեն: Տվյալ դեպքում գրացուցակն ընդամենը տվյալների հավաքագրում էր՝ առանց նվազագույն ստեղծագործականության, հետևաբար՝ Դատարանը եզրակացրեց, որ այն պաշտպանության ենթակա չէ⁹⁷: Բացի այն բանից, որ աշխատանքը պետք է ունենա *ստեղծագործականության նվազագույն մակարդակ*, այն պետք է *ինքնուրույն ստեղծված լինի հեղինակի կողմից*⁹⁸, այսինքն՝ չլինի մեկ այլ ստեղծագործության պատճենը: Դատարանի մեկնաբանմամբ՝ մտավոր աշխատանքի արդյունքները պետք է *մտավոր աշխատանքի պտուղներ լինեն*, որոնք *արմատավորված են մտքի ստեղծագործական ուժերում* և *հեղինակի յուրօրինակ մտավոր պատկերացումներն են*⁹⁹: Այսինքն՝ մտտեցումն այն է, որ, բացի աշխատանքից և ներդրված զուտ ջանքերից, մտավոր աշխատանք և մտքի ուժ է հարկավոր հեղինակային իրավունքի պաշտպանություն ստանալու համար: Սա վկայում է ստեղծագործականության մարդկային տարրի մասին: Ավելին, ԱՄՆ հեղինակային իրավունքի գրասենյակը պարզաբանել է, որ գրանցման ենթակա է միայն *մարդ-հեղինակի* ստեղծած յուրօրինակ ստեղծագործությունը¹⁰⁰:

Այսպիսով, եզրահանգում ենք, որ թե՛ մայրցամաքային, թե՛ ընդհանուր իրավունքի համակարգերում հեղինակային իրավունքն ունի մարդակենտրոն հիմք. առանց աշխատանքում *մարդ-հեղինակի նվազագույն ստեղծագործական ներդրման*, այլ կերպ՝ առանց *յուրօրինակության* և *հեղինակության* չափանիշները բավարարելու՝ հեղինակային իրավունք չի կարող առաջանալ, և պաշտպանություն չի կարող տրամադրվել: Սակայն սա չի բացառում ԱՌ ձեռք բերած արդյունքներին առավել նվազ պաշտպանություն տրամադրելու հնարավորությունը՝ հարակից իրավունքների ինստիտուտի ներքո, ինչը ներկայումս լայնորեն քննարկվում է միջազգային մասնագիտական հարթակներում:

ԱՌ ձեռք բերած արդյունքների իրավական պաշտպանության անհրաժեշտության և առաջարկվող լուծումների համառոտ ամփոփում¹⁰¹:

⁹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 340, 347:

⁹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 345, 358, 362:

⁹⁹ Տե՛ս *Burrow-Giles Lithographic Co. v. Sarony*, 111 U.S. 53, 58 (1884):

¹⁰⁰ Տե՛ս U.S. Copyright Office, *Compendium U.S. Copyright Office Practices*. § 306 (3d ed. 2017):

¹⁰¹ Ծավալային սահմանափակումից ելնելով՝ սույն հոդվածում հակիրճ ներկայացվում են հիմնական մտտեցումները և քննարկվող լուծումները:

ԱԻ ձեռք բերած արդյունքների իրավական պաշտպանության անհրաժեշտությունը մասնագիտական գրականության մեջ հիմնականում քննարկվում է մտավոր սեփականության իրավափիլիսոփայական տեսությունների և տնտեսական ասպեկտների համատեքստում: Պաշտպանության ուղղակի հիմքեր չգտնելով *աշխատանքի* և *անհատականության* իրավափիլիսոփայական տեսություններում՝ ԱԻ ձեռք բերած արդյունքների պաշտպանության հնարավորությունը դիտարկվում է *խրախուսման տեսության* շրջանակում, որը հիմնվում է հեղինակային իրավունքի՝ անգլոամերիկյան համակարգում ընդունված նպատակի վրա, այն է՝ գիտության և արվեստի առաջընթացի խրախուսումը: Թեև համակարգիչներն ու ռոբոտները ունակ չեն խրախուսվելու գումարով կամ հեղինակությամբ, համբավի ձեռք բերմամբ, կարծիք կա, որ առանց շոշափելի խրախուսման միջոցների ԱԻ ծրագրավորողները և ԱԻ ստեղծելը ֆինանսավորող կազմակերպությունները հետաքրքրված չեն լինի բարելավել ԱԻ ունակությունները կամ ստեղծել նորերը¹⁰²: Հեղինակային իրավունքի *տնտեսական ասպեկտի* տեսանկյունից պաշտպանության տրամադրումը հիմնավորվում է շուկայում որոշակի տեսակի և քանակի ապրանքների պահանջարկ-առաջարկը հավասարակշռելու նպատակով, ինչը կարող է խախտվել՝ հանգեցնելով «շուկայի ձախողման», եթե չկա արդյունավետ պաշտպանություն¹⁰³: Հօգուտ ԱԻ ձեռք բերած արդյունքներին պաշտպանություն տրամադրելուն՝ որոշ հեղինակներ ուշադրություն են հրավիրում այն հանգամանքին, որ ԱԻ ծրագրավորողը կամ օգտագործողը, մտավախություն ունենալով, որ ԱԻ ստացած արդյունքը կընկնի հանրային տիրույթ, կարող է թաքցնել արդյունքն ԱԻ ստացած լինելու փաստը¹⁰⁴, ինչն էլ կհանգեցնի ԱԻ նորարարության գործընթացների դանդաղեցման¹⁰⁵: Մի խումբ հեղինակներ էլ մտահոգություն են հայտնում, որ պաշտպանության տրամադրումը կհանգեցնի թվային շուկաներում մրցակցության անհավասարակշռության, քանի որ ԱԻ արտադրությունը հիմնականում կենտրոնացած է ԱՄՆ-ում և Ճապոնիայում տեղակայված մի քանի խոշոր խաղացողների ձեռքում¹⁰⁶, ինչն էլ կարող է

¹⁰² Հակառակն էլ է նշվում, որ ԱԻ ստեղծողները/ներդրողներն արդեն բավարար խրախուսված են նորարարություն անելու, քանի որ իրավունք են ձեռք բերում ԱԻ (software/hardware) նկատմամբ, և դրանից դուրս, այլ իրավունքներ տալը կարող է հանգեցնել կրկնակի խրախուսման և գերագնահատման: Նշվում է նաև, որ չկա բավարար ուսումնասիրություն, թե ներդրողները խրախուսման կարիք ունեն արդյոք, թե ոչ, ուստի դեռ վաղ է կարգավորելը:

¹⁰³ Հակառակն էլ է նշվում, որ դեռևս չկա շուկայի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ բավարար ուսումնասիրություն, տե՛ս **Begoña González Otero and João Pedro Quintais**, *Before the Singularity: Copyright and the Challenges of Artificial Intelligence*, September 25, 2018, [http://copyrightblog.kluweriplaw.com/2018/09/25/singularity-copyright-challenges-artificial-intelligence/?doing_wp_cron=1588365019.97397708892822265625]

¹⁰⁴ Տե՛ս **Hristov Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Dilemma*, նշվ. աշխ., էջ 450:

¹⁰⁵ Տե՛ս **Tim Dornis**, նշվ. աշխ., էջ 40, հղում 138:

¹⁰⁶ Տե՛ս WIPO, *Artificial Intelligence*, WIPO Tech. Trends 2019, էջ 58 (2019):

հանգեցնել *վերաֆեռողական* ամբողջ աշխարհում¹⁰⁷:

Առաջարկվող լուծումների մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար հակիրճ ներկայացնենք Մտավոր սեփականության պաշտպանության միջազգային ասոցիացիայի պատրաստած զեկույցում երեսուն պետությունների և անկախ անդամների¹⁰⁸ ամփոփ դիրքորոշումները: ա) Երկրների բացահայտ մեծամասնությունը գտնում է, որ ԱԻ ձեռք բերած արդյունքների պաշտպանության հարցում գլոբալ ներդաշնակեցումը ցանկալի է: բ) ԱԻ ձեռք բերած արդյունքները կարող են պաշտպանվել հեղինակային իրավունքով միայն այն դեպքում, եթե դրանցում կա մարդկային ստեղծագործական բավարար միջամտություն: գ) Երկրների մեծամասնությունը գտնում է, որ ԱԻ ձեռք բերած արդյունքները պետք է պաշտպանվեն հարակից իրավունքների ինստիտուտով, եթե դրանք բավարարում են փաստացի չափանիշները: Այս ինստիտուտը չի պահանջում յուրօրինակության *հեղինակի սեփական մտավոր ստեղծագործություն* չափանիշը, ուստի չկա մարդ-հեղինակի առկայության պահանջ: Հետևաբար մի կողմից պաշտպանություն կտրամադրվի ԱԻ ձեռք բերած արդյունքներին, մյուս կողմից՝ չի խաթարվի հեղինակային իրավունքի էությունը: Առաջարկվում է ներմուծել նոր հարակից իրավունքներ (*sui generis*), որոնք ուղղված կլինեն միայն այդ ոլորտում ներդրումների խրախուսմանը, և անհիմն չի ընդլայնի պաշտպանության շրջանակը: Որպես պաշտպանունակության չափանիշ հիմնականում նշվում են ավարտուն աշխատանքի *յուրօրինակությունը* (օբյեկտիվ չափանիշ) և *ներդրումները*, որոնք կատարվել են ԱԻ ստեղծման գործում: Ընդունվում է, որ նոր իրավունքները պետք է լինեն միայն տնտեսական, օրինակ՝ պատճենման և արդյունքը հանրությանը հաղորդելու իրավունքները: Բարոյական իրավունքները չպետք է ճանաչվեն: Նոր հարակից իրավունքների սկզբնական իրավատերերը պետք է լինի ԱԻ համակարգի ստեղծման մեջ ներդրումներ կատարողը: Իրավական պաշտպանության ժամկետը պետք է ավելի կարճ լինի, քան հեղինակային իրավունքինը, կամ նշվում է՝ նաև ավանդական կատեգորիայի հարակից իրավունքների ժամկետները¹⁰⁹:

Ամփոփելով հոդվածը եզրահանգում ենք, որ ստեղծագործելը դեռևս մարդու մենաշնորհն է: ԱԻ զարգացման ներկայիս փուլում առավել ճիշտ է օգտագործել *առավելագույն ինքնավարություն ունեցող*

¹⁰⁷ Տե՛ս **Tim Dornis**, նշվ. աշխ., էջ 41: Նշվում է նաև, որ այգործիքմական տնտեսության երկարաժամկետ հաղթողները աշխարհի ընկերությունների ընդամենը մի փոքր մասն են, տես **Richard B. Freeman**, *Who Owns the Robots Rules the World*, 5 Iza World of Labor, էջ 1, 5-6 (2015); **Peter Stone et al.**, *Artificial Intelligence and Life in 2030: One Hundred Year Study on Artificial Intelligence*, Stan. U., էջ 43-49 (2016), **Tim Dornis**, նշվ. աշխ., էջ 41, հղում 144:

¹⁰⁸ Տե՛ս AIPPI 2019 – *Study Question*, նշվ. աշխ., էջ 3:

¹⁰⁹ Տե՛ս AIPPI 2019–*Study Question*, նշվ. աշխ., էջ 18-19: Մասնագիտական գրականության մեջ քննարկվում է նաև այս փուլում ստատուս քվոն պահելու տարբերակը՝ առաջարկելով օգտվել տարբեր համակարգերում գործող ինստիտուտների (այդ թվում՝ անբարեխիղճ մրցակցություն, առևտրային գաղտնիք, և այլ) պաշտպանությունից:

ԱԻ ձեռք բերած կամ ստացած արդյունքներ եզրութաբանությունը: Նման արդյունքներին հեղինակային իրավունքի պաշտպանություն տրամադրելն այս փուլում անհնար է, քանի դեռ դրանք չեն բավարարում պաշտպանունակության պայմանները, այդ թվում՝ *յուրօրինակության* չափանիշը, և *մարդ-հեղինակի* առկայության պահանջը, մարդ-հեղինակի ստեղծագործական միջամտությունը պարտադիր է: Լիովին հնարավոր է նման արդյունքներին ավելի նվազ՝ հարակից իրավունքների ինստիտուտով պաշտպանություն տրամադրելը, սակայն նման պաշտպանության անհրաժեշտության վերաբերյալ, մասնավորապես՝ *տեխնոլոգիաներում ներդրումների խրախուսման* և *շուկայի ձախողման* փաստարկների, ինչպես նաև *ծախսերի* և *օգուտների* հաշվարկման տեսանկյունից ապացույցների վրա հիմնված բավարարուսումնասիրություններ դեռևս չկան: Ուստի վաղ է խոսել հարակից իրավունքի ինստիտուտը որպես ԱԻ ձեռք բերած արդյունքների իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմ համարելու և համապատասխան կարգավորում նախատեսելու մասին: Այս հանգամանքը, սակայն, չպետք է խանգարի մեկ քայլ առաջ անցնել և ուսումնասիրել նման պաշտպանություն տրամադրելու հնարավորության դեպքում համապատասխան չափանիշների ու կոնկրետ կանոնների շրջանակի սահմանման և դրան առնչվող այլ հարցերը:

Բանալի բառեր - *արհեստական ինտելեկտ, արհեստական բանականություն, նյարդային ցանցեր, մեքենայական ուսուցում, մտավոր սեփականություն, հեղինակային իրավունք, հարակից իրավունքներ, յուրօրինակություն, մարդ-հեղինակ, տեղեկատվական տեխնոլոգիաներ*

TATEVIK DAVTYAN – Влияние искусственного интеллекта на законодательную политику авторского права: вызовы и ответ. – В статье рассматриваются основные аспекты взаимодействия так называемого автономного искусственного интеллекта и института авторского права и анализируются лидирующие позиции в профессиональной литературе в этой области по следующим важным вопросам: устраняет ли искусственный интеллект нынешнего поколения монополию человека на креативность и творчество, можно ли сказать, что он способен создавать уникальные произведения в области науки, литературы и искусства. Если нет, то целесообразно, возможно или допустимо ли представлять правовую охрану для результатов, полученных таким искусственным интеллектом, которые сопоставимы, а иногда и превосходят исходные человеческие произведения, в рамках институтов авторского права или смежных прав? Если да, то на каких основаниях и кто должен иметь право на результаты, полученные искусственным интеллектом, какие конкретно права и на какие сроки.

Ключевые слова: *искусственный интеллект, нейронные сети, машинное обучение, интеллектуальная собственность, авторское право, смежные права, оригинальность, человек автор, информационные технологии*

TATEVIK DAVTYAN – The Impact of Artificial Intelligence on the Legislative Policy of Copyright: Challenges and a Response. – The article discusses

the main aspects of the interaction of the so-called autonomous artificial intelligence systems and the concepts of Copyright and Related Rights. It reveals leading positions in the professional literature on the following important issues: does the artificial intelligence of the current generation eliminate the monopoly of a human to creativity and it can be said that such an artificial intelligence can “create” unique “works” in the field of science, literature and art. If not, should the results obtained or received by such artificial intelligence systems that are comparable, similar, and sometimes even surpass the original human works, have legal protection in the framework of Copyright or Related Rights? If so, which framework should be available for providing such legal protection, on what grounds, who should be the original right owner of the results obtained by artificial intelligence, what rights should be granted, and what should be the term of such protection.

Key Words: *artificial intelligence, neural networks, machine learning, intellectual property, copyright, related rights, originality, human authorship, information technology*

Ներկայացվել է՝ 24.07.2020,
Գրախոսվել է՝ 28.08.2020,
Ընդունվել է տպագրության՝ 30.09.2020